

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Բ. Թադևոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատուց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **14,562,190 (չորսանչորս միլիոն հինգ հարյուր վաթսուներկու հազար հարյուր ինսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում

է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:¹⁶ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

¹⁶ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.16 Սույն պայմանագրով նախատեսված Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական պահուստի դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎՎԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ


ՎԱՃԱՌՈՂ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144129
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

«Կոնցեն-Էներգոմաշ» ՓԲԸ
Ք. Երևան, Արզումանյան 32-10
«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 01210095
1 տնօրեն



Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ



Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ձ/հ	Գնման ենթակա ասպրանքների անվանումը	Տեխնիկական հատկանիշներ	ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ	ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1.	Գլյուկոզաթեսթ	800 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	GLUC HK Gen.3, 800Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
2.	Ընդհանուր սպիտակուց թեսթ	300 թեսթ պարունակող կասետ, 15-25 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	TP Gen.2, 300Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
3.	Ալբումին թեսթ	300 թեսթ պարունակող կասետ, 15-25 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	ALB BCG Gen.2, 300Tests, cobas c, Int.	Roche Diagnostics
4.	Բիլիռուբին ընդհանուր թեսթ	250 թեսթ պարունակող, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	BIL-T Gen.3, 250Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
5.	Բիլիռուբին տրոլի թեսթ	350 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	BIL-D Gen.2, 350Test cobas c, integra	Roche Diagnostics
6.	Միզանյութ թեսթ	500 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	UREAL, 500 Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
7.	Միզաթթու թեսթ	400 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	UA Gen.2, 400Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
8.	Կրեատինին թեսթ	700 թեսթ պարունակող կասետ, 15-25 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	CREA Gen.2, 700Test, cobas c, Integra	Roche Diagnostics
9.	Տրանսամինազա UUS թեսթ	500 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	ASTL, 500Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
10.	Տրանսամինազա ULS թեսթ	500 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	ALT, 500Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
11.	Գամմա-գլյուտամիլտրանսպեպտիլազ թեսթ	400 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	GGT Gen.2, 400Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
12.	Ալֆա-Ամիլազ թեսթ	300 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	AMYL Gen.2, 300Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
13.	Լիպազ թեսթ	200 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	LIPC, 200Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
14.	Հիմնային ֆոսֆատազ թեսթ	200 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	ALP IFCC Gen.2 S, 200T, cobas c, Int	Roche Diagnostics
15.	Լակտատ-դեհիդրոգենազ թեսթ	300 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	LDHI Gen. 2 acc. IFCC, 300T, cobas c, Int.	Roche Diagnostics
16.	Կրեատինին ակազ թեսթ	200 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	CK 200 T, cobas c/Integra	Roche Diagnostics
17.	Կրեատինին ակազ CK-MB ֆրակցիայի թեսթ	100 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	CK-MB 100 T, cobas c/Integra	Roche Diagnostics
18.	Միոգլոբին թեսթ	100 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	MYO Gen.2, 100Test, cobas c, Integra	Roche Diagnostics

19.	Խոլեսթերոլթեսթ	400 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	CHOL Hico Gen.2, 400Tests, cobas c, Int	Roche Diagnostics
20.	Տրիգլիցերիդներթեսթ	250 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	TRIGL, 250Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
21.	HDL - Լիպոպրոտեիններ (ալբա) թեսթ	350 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	HDL-Cholesterol Gen.4, 350 tests, cobas c, integra	Roche Diagnostics
22.	LDL - Լիպոպրոտեիններ (բետա) թեսթ	200 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	LDL-Cholesterol, Gen. 3, 200 tests	Roche Diagnostics
23.	Գլյուկոզիդրացված հեմոգլոբինթեսթ	150 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	HbA1c TQ Gen.3, 150Tests,cobas c 50I	Roche Diagnostics
24.	Մագնեզիումթեսթ	250 թեսթ պարունակող կասետ, 15-25 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	MG Gen.2, 250Tests, cobas c	Roche Diagnostics
25.	Երկաթթեսթ	200 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	IRON Gen.2, 200Tests,cobas c, Integra	Roche Diagnostics
26.	Անտիթրոմբին III թեսթ	100 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	AT3, 100Tests,cobas c, INTEGRA	Roche Diagnostics
27.	Անտիտրոմբոլիզին-O թեսթ	150 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	ASLO TQ, 150Tests, cobas c	Roche Diagnostics
31.	Իմունոգլոբուլին A թեսթ	150 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	IGA Gen.2, 150Tests,cobas c	Roche Diagnostics
32.	Իմունոգլոբուլին M թեսթ	150 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	IGM Gen.2, 150Tests,cobas c	Roche Diagnostics
33.	Իմունոգլոբուլին G թեսթ	150 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	IGG Gen.2, 150Tests,cobas c	Roche Diagnostics
34.	Կոմպլիմենտֆակտոր C3c	100 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	C3c, 100Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
35.	Կոմպլիմենտֆակտոր C4	100 թեսթ պարունակող կասետ, 2-8 աստիճան աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	C4, 100 Tests, cobas c, Integra	Roche Diagnostics
37.	ԿալիբրատորC.f.a.s. Protein, 5x 1 ml	Երկազմում սպիտակուցի 5 x 1 մլ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Cfas Proteins	Roche Diagnostics
38.	ԿալիբրատորC.f.a.s. Lipids (3 x 1 ml)	Կալիբրատոր ճարպերի լրակազմում 3 x 1 մլ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Cfas Lipids 3x1 ML	Roche Diagnostics
39.	ԿալիբրատորC.f.a.s. CK-MB, (3 x 1 ml)	Երկազմում 3 x 1 մլ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Cfas CK-MB 3x1ML	Roche Diagnostics

45.	Կալիբրատոր C.f.a.s. PUC (5x1ml)	Երկարակետյա 5x1 մլ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով ցուրտ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Cfas Protein5-U	Roche Diagnostics
46.	Ստուգիչ HbA1c N (4X1 ml)	Երկարակետյա 4X1 մլ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով ցուրտ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	PreciControl HBA1c Norm	Roche Diagnostics
47.	Ստուգիչ HbA1c P (4X1 ml)	Երկարակետյա 4X1 մլ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով ցուրտ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	PreciControl HBA 1c Path	Roche Diagnostics
55.	Կասետ-NaOH-D (c-pack) 66 մլ	66 մլ քանակի, 15-25 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով ցուրտ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	NaOH-D, cobas c	Roche Diagnostics
56.	Կասետ SMS (c-pack) 50մլ	50մլ քանակի, 15-25 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով ցուրտ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	SMS, cobas c	Roche Diagnostics
57.	Լուծիչ 9 % NaCl Diluent (c-pack) 50մլ	9 % NaCl 50մլ քանակով, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով ցուրտ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	NACL 9% Dil, cobas c	Roche Diagnostics
58.	Լվացող հեղուկ Detergent 1 NaOH -D (1.8 L)	1.8 Լ ծավալով, 15-25 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով ցուրտ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	NaOH-D/Basic Wash 1.8 L	Roche Diagnostics
59.	Լվացող հեղուկ Detergent 2 (1.8 L)	1.8 Լ ծավալով, 15-25 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով ցուրտ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Acid wash Solution 1.8 L	Roche Diagnostics
60.	Sample Cleaner 1 (12x59 ml)	Երկարակետյա 12x59 մլ, 15-25 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով ցուրտ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Multiclean, cobas c	Roche Diagnostics
61.	Նմուշի վաղորդիչը - Sample Cleaner 2 SMS/Acid wash (12x66 ml)	Երկարակետյա 12x66 մլ, 15-25 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով ցուրտ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	SMS Solution for HIT 917	Roche Diagnostics
62.	Էկոտերջենտ - Ecotergent (12x59 ml)	Երկարակետյա 12x59 մլ, 15-25 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով ցուրտ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	EcoTergent, cobas c501/502, 12x59 ml	Roche Diagnostics
63.	HbA1c հեմոգլիկացիոն ռեժիմի համար Whole blood 51 մլ	51 մլ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով ցուրտ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	HbA1c TQ	Roche Diagnostics
64.	Հալոգենացիոն 12V/50W	12V/50W, նախատեսված է Cobas 6000 անալիզատորի համար, գործարանային փաթեթավորումով ցուրտ	haemolyzingrt, cobas c LAMP HALOGEN ASSY12V/50W	Roche Diagnostics
66.	SI2 Սիճուկային ռեժիմի 2750 թեսթ	2750 թեսթ, 2-8 աստիճան ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով ցուրտ: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	NACL 9% SI Gen.2, cobas c	Roche Diagnostics
68.	Ակտիվատոր (9X 12ml)	Երկարակետյա 9x12մլ, 2-8 ջերմային ռեժիմ գործարանային փաթեթավորումով ցուրտ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	Activator for cobas c. Integra, c 111	Roche Diagnostics
70.	Նմուշատուրի քանակի - cobas Integra Check Sample 25 մլ	25 մլ, 2-8 ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորումով ցուրտ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	cobas Integra Check Solution, 25 ml	Roche Diagnostics
75.	Սարքի ստուգիչ թեսթային ստեղծագործություն INSTC 65 թեսթ	65 թեսթ քանակի, գործարանային փաթեթավորումով ցուրտ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	INSTC, 65 Tests, cobas c	Roche Diagnostics
76.	Ինտեգրացիոնալ Cobas 6000-ի կետային ստեղծագործություն (c-501, e-601)	Երկարակետյա Tube for pinchE 170 (4pcsl), Seal piece P, seal Piece S, PV Tubel, siper tube 1, Packing L443085, Seal piece 5.5 upper, Seal piece 5.5 lower, S Seal piece U1, S Seal piece D1, R Seal piece U1, R Seal piece D1, S1 Seal piece U1, S1 Seal piece U2: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար:	KIT MAINTENANCE MODULAR E/E601 (labeled E170 kit assy) C501 MAINTENANCE KIT 1	Roche Diagnostics

	77.	ԻնանքիիակաCobas 6000-ի մեկտարվահամար	Իրականում Siper nozzle, Heat cut filter, Nozzle tip, Hepa filter: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի շահագործումը ապահովելու համար: 1 x 1000 մլ, 15-25ջերմային ռեժիմ, գործարանային փաթեթավորմամբ, նախատեսված է Cobas Integra 400+ լաբորատոր անալիզատորի համար	KIT 1 MAINTENANCE KIT 4 C501 cobas Integra Cleaner	Roche Diagnostics Roche Diagnostics
80.		Լվացողլուծույթ 1000 ml			

Ապրանքները պետք է ունենան.


1. Եվրամիության և /կամ ԵՍՏՄ երկրներից որևէ մեկում և /կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):
2. Արտադրողին տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ):
3. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:
4. Պրտաներիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան արնակազն պիտաներիության ժամկետի 1/2-ը:
5. Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

***Թիվ 1,2,3 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատակարարման ժամանակ**

6. Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Արթուրյան, Արզնու խճուղի՝ կենտրոնական բազա:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ




Մ. ՂԱՄԲԱՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Handwritten signature and ID number:
Հեղինակ՝ Ս. Սարգսյան
ՀԱՊ 0 33 75 5 8

Բ. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ



ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Չ/ճ	Քանակը	Միավորի գինը (<< դրամ)	Ընդամենը գումարը (<< դրամ)
1.	Գլյուկոզ թեսթ	հատ	15	19,000	285,000
2.	Ընդհանուր սպիտակուց թեսթ	հատ	30	7,500	225,000
3.	Ալբումին թեսթ	հատ	1	14,000	14,000
4.	Բիլիռուբին ընդհանուր թեսթ	հատ	40	17,000	680,000
5.	Բիլիռուբին ուրոպակի թեսթ	հատ	30	13,000	390,000
6.	Միզանյութ թեսթ	հատ	10	15,000	150,000
7.	Միզաթթու թեսթ	հատ	1	29,000	29,000
8.	Կրեատինին թեսթ	հատ	7	14,000	98,000
9.	Տրանսամինազա ALU թեսթ	հատ	15	14,000	210,000
10.	Տրանսամինազա ULՏ թեսթ	հատ	18	14,000	252,000
11.	Գամմա-գլոբուլին տրանսպեպտիդազ S թեսթ	հատ	3	19,000	57,000
12.	Ալֆա-Ամիլազ թեսթ	հատ	5	42,000	210,000
13.	Լյալազ թեսթ	հատ	1	24,750	24,750
14.	Հրմային ֆոսֆատազ թեսթ	հատ	6	11,000	66,000
15.	Լակտատ-դեհիդրոգենազ թեսթ	հատ	1	19,000	19,000
16.	Կրեատին կինազ թեսթ	հատ	1	19,800	19,800
17.	Կրեատին կինազ CK-MB ֆրակցիայի թեսթ	հատ	2	19,410	38,820
18.	Միոգլոբին թեսթ	հատ	2	137,230	274,460
19.	Խոլեսթերոլ թեսթ	հատ	13	19,000	247,000
20.	Տրիգլիցերիդներ թեսթ	հատ	13	15,000	195,000
21.	HDL - Լիպոպրոտեիդներ (ալֆա) թեսթ	հատ	12	48,400	580,800
22.	LDL - Լիպոպրոտեիդներ (բետա) թեսթ	հատ	12	84,000	1,008,000
23.	Գլյուկոզիբացված հեմոգլոբին թեսթ	հատ	7	91,950	643,650
24.	Մազնեզիում թեսթ	հատ	1	26,000	26,000
25.	Երկաթ թեսթ	հատ	2	15,000	30,000
26.	Անտիթրոմբին III թեսթ	հատ	1	69,000	69,000
27.	Անտիստրեպտոկոկին-O թեսթ	հատ	17	60,000	1,020,000
31.	Իմունոգլոբուլին A թեսթ	հատ	1	61,000	61,000
32.	Իմունոգլոբուլին M թեսթ	հատ	1	61,000	61,000
33.	Իմունոգլոբուլին G թեսթ	հատ	1	61,000	61,000
34.	Կոմպլիմենտ ֆակտոր C3c	հատ	1	52,000	52,000
35.	Կոմպլիմենտ ֆակտոր C4c	հատ	1	47,600	47,600
37.	Կալիբրատոր C.f.a.s. Protein, 5x1 ml	լրակազ	10	110,000	1,100,000
38.	Կալիբրատոր C.f.a.s. Lipids (3 x 1 ml)	լրակազ	9	17,000	153,000
39.	Կալիբրատոր C.f.a.s. CK-MB, (3 x 1 ml)	լրակազ	6	22,000	132,000
45.	Կալիբրատոր C.f.a.s. PUC (5x1ml)	լրակազ	2	88,000	176,000
46.	Ստուգիչ HbA1c N (4X1 ml)	լրակազ	5	109,300	546,500
47.	Ստուգիչ HbA1c P(4X1 ml)	լրակազ	5	109,300	546,500

55.	Կասետ-NaOH-D (c-pack) 66 սլ	հատ	5,340	160,200
56.	Կասետ SMS (c-pack) 50սլ	հատ	13,480	13,480
57.	Լուծիչ 9 % NaCl Diluent (c-pack) 50սլ	հատ	8,950	53,700
58.	Լվացող հերոկ Detergent 1 NaOH -D(1.8 L)	հատ	10,245	307,350
59.	Լվացող թթու հերոկ- Detergent 2 (1.8 L)	հատ	20,810	83,240
60.	Sample Cleaner 1 (12x59 ml)	լրակազմ	34,000	136,000
61.	Նմուշի վկացող հերոկ- Sample Cleaner 2 SMS/Acid wash (12x66 ml)	լրակազմ	11,540	23,080
62.	Էկոտերջենտ-Ecotergent (12x59 ml)	լրակազմ	250,000	1,500,000
63.	HbA1c հանդիպացնող ռեագենտ. Whoool blood 51 սլ	հատ	32,000	224,000
64.	Հայրզեն լանսյ 12V/50W	հատ	217,000	651,000
66.	S12 Սինոկային ինդեքս 2750թեսթ	հատ	20,000	40,000
68.	Ավտիվատոր (9X 12ml)	լրակազմ	35,840	179,200
70.	Նմուշի ստուգիչ-cobas Integra Check Sample 25 սլ	հատ	13,000	26,000
75.	Սարքի ստուգիչ թեսթ կասետ INSTC 65 թեսթ	հատ	15,530	31,060
76.	Ինտամքի հավաք Cobas 6000-ի կես տարվա համար (c-501, e-601)	լրակազմ	311,000	311,000
77.	Ինտամքի հավաք Cobas 6000-ի մեկ տարվա համար	լրակազմ	750,000	750,000
80.	Լվացող լուծույթ 1000 ml	հատ	13,700	274,000
Ընդամենը				14,562,190

Փնման ժամանակացույցը կսահմանակի հանապարտախիսան ֆինանսական միջոցներ հարկացվելուց հետո՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում՝ պահպանելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջները:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ




Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեն-Էներգոմաշ» ՓԲԸ

1 տնօրեն Ն. Կեչիկյան
 ՀՀ ԿՈՆՑԵՆ ԷՆԵՐԳՈՄԱՇ ՓԲԸ



ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չ/հ	CPV անվանում և ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գումար / << դրամ/
1.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Գլյուկոզա թեսթ/	33691162/626	285,000
2.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Ընդհանուր սպիտակուց թեսթ/	33691162/627	225,000
3.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Ալբումին թեսթ/	33691162/628	14,000
4.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Բիլիռուբին ընդհանուր թեսթ/	33691162/629	680,000
5.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Բիլիռուբին ուղղակի թեսթ/	33691162/630	390,000
6.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Սիզալյուս թեսթ/	33691162/631	150,000
7.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Սիզալթու թեսթ/	33691162/632	29,000
8.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Կրեատինին թեսթ/	33691162/633	98,000
9.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Տրանսամինազա աստ թեսթ/	33691162/634	210,000
10.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Տրանսամինազա պտ թեսթ/	33691162/635	252,000
11.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Գամմա-գլյուամին տրանսպեպտիդազ տ թեսթ/	33691162/636	57,000
12.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Ալֆա-ամիլազ թեսթ/	33691162/637	210,000
13.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Լիպազա թեսթ/	33691162/638	24,750
14.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Հիմային ֆոսֆատազ թեսթ/	33691162/639	66,000
15.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Լակտատ-դեհիդրոգենազ թեսթ/	33691162/640	19,000
16.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Կրեատին կինազա թեսթ/	33691162/641	19,800
17.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Կրեատին կինազա ck-mb ֆրակցիայի թեսթ/	33691162/642	38,820
18.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Միոգլոբին թեսթ/	33691162/643	274,460
19.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Խոլեսթերոլ թեսթ/	33691162/644	247,000
20.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Տրիգլիցերիդներ թեսթ/	33691162/645	195,000
21.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Hdl - լիպոպրոտեոլներ (ալֆա) թեսթ/	33691162/646	580,800
22.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Ldl - լիպոպրոտեոլներ (բետա) թեսթ/	33691162/647	1,008,000
23.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Գլյուկոլիթազ կազմակերպող թեսթ/	33691162/648	643,650
24.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Մագնեզիում թեսթ/	33691162/649	26,000
25.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Երկաթ թեսթ/	33691162/650	30,000
26.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Աստիթոմբին iii թեսթ/	33691162/651	69,000
27.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Անտիստրեպտոկոկին-ո թեսթ/	33691162/652	1,020,000
31.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Իմունոգլոբուլին a թեսթ/	33691162/656	61,000
32.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Իմունոգլոբուլին m թեսթ/	33691162/657	61,000
33.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Իմունոգլոբուլին g թեսթ/	33691162/658	61,000
34.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Կրեատինին ֆակտոր c3c /	33691162/659	52,000
35.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Կրեատինին ֆակտոր c4c /	33691162/660	47,600
37.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կալբրատոր c.f.a.s. Protein, 5x1 ml/	33691423/639	1,100,000
38.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կալբրատոր c.f.a.s. Lipids (3 x 1 ml)/	33691423/640	153,000
39.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կալբրատոր c.f.a.s. Ck-mb, (3 x 1 ml)/	33691423/641	132,000
45.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կալբրատոր c.f.a.s. Puc (5x1ml)/	33691423/647	176,000
46.	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ստուգիչ hba1c n (4x1 ml)/	33691423/648	546,500

55.	Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր/Կանոն-naoh-d (c-pack)66 սլ/	33691423/649	546,500
56.	Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր/Կանոն-naoh-d (c-pack) 50սլ/	33691167/570	160,200
57.	Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր/Լուծիչ 9% nacl diluent (c-pack) 50սլ/	33691167/571	13,480
58.	Լաբորատոր ագրանյութեր (ռեագենտներ)/Լվացող հեղուկ detergent 1 naoh -d (1.8 l)/	33691167/572	53,700
59.	Լաբորատոր ագրանյութեր (ռեագենտներ)/Լվացող թթու հեղուկ- detergent 2 (1.8 l)/	33691162/661	307,350
60.	Լաբորատոր ագրանյութեր (ռեագենտներ) բազմակրկայուններ/Sample cleaner 1 (12x59 ml)/	33691162/662	83,240
61.	Լաբորատոր ագրանյութեր (ռեագենտներ) բազմակրկայուններ/Sample cleaner 2 sms/acid wash (12x66 ml)/	33691423/657	136,000
62.	Լաբորատոր ագրանյութեր (ռեագենտներ) բազմակրկայուններ/Էկոտերջնոտ-ecotergent (12x59 ml)/	33691423/658	23,080
63.	Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր/Hbaltc հեմոլիզացնող ռեագենտ. Whoool blood 51 սլ/	33691423/659	1,500,000
64.	Բժշկական սարքավորումների պահեստամասեր/Հայրգեն լանպ 12v/50w/	33691167/573	224,000
66.	Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր/Si2 սիմուլյան ինդեքս 2750թեսթ/	3311490/515	651,000
68.	Լաբորատոր ագրանյութեր (ռեագենտներ) բազմակրկայուններ/Ալտիսկատոր (9x 12ml)/	33691167/574	40,000
70.	Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր/Սարքի ստուգիչ թեսթ կատետ INTC 65 թեսթ/	33691423/662	179,200
75.	Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր/Սարքի ստուգիչ թեսթ կատետ INTC 65 թեսթ/	33691167/575	26,000
76.	Լաբորատոր ագրանյութեր (ռեագենտներ) բազմակրկայուններ/Խնամքի հավաք Cobas 6000-ի կես տարվա համար (c-501, e-601)/	33691167/580	31,060
77.	Լաբորատոր ագրանյութեր (ռեագենտներ) բազմակրկայուններ/Խնամքի հավաք Cobas 6000-ի մեկ տարվա համար/	33691423/663	311,000
80.	Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր/Լվացող լուծույթ 1000 ml/	33691423/664	750,000
Ընդամենը			14,562,190

Վճարման ժամանակացույց կաահանանկի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

ԳՆՈՐԴ


ՀՀ պաշտպանության նախարարություն
 ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ



Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՆՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
 1 տնօրեն *Վ. Արզումանյան*
 ՀՀ ՕՅՅ 75578



Ք. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « »
« » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը
հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և
դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման անսաթիվը _____ պայմանագրի համարը _____
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն